ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի
աշխատակազմի ղեկավար
պարոն Տիգրան Մարտիրոսյանին

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,**

Տեղեկացնում եմ, որ 2017թ. ապրիլի 9-ից 13-ը պաշտոնական այցով Հայաստանի Հանրապետությունում է գտնվել Լեհաստանի Երեխաների իրավունքների հանձնակատար Մարեկ Միխալակի գլխավորած պատվիրակությունը: Պատվիրակության կազմում էին Երեխաների իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցներ Բարբարա Սմոլինսկան և Սյուզաննա Կարապետյանը:

Այցի շրջանակներում պատվիրակության անդամները հանդիպում են ունեցել ինչպես ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, այնպես էլ բարձրաստիճան այլ պաշտոնյաների հետ: Լեհաստանի Երեխաների իրավունքների հանձնակատար Մարեկ Միխալակի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է մի շարք մասնագիտական ու մշակութային միջոցառումների:

Տեղեկացնում եմ նաև, որ պատվիրակության անդամների համար կազմակերպվել է 58.200 (հիսունութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ արժողությամբ ընդունելություն:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի
ռեֆերենտ

Ջուլիետա Բաղդասարյան
13.04.2017թ.